

Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)	ԵՐԿԱԹԲԵՏՈՆԵ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱԼՆԵՐ (6ՇԻԿ006, 6ՇԻԿ006Ա)
ECTS կրեդիտ	3+1 կրեդիտ
Դասընթացը	Դադայան Հ., դասախոս
Ուսումնասության վերջնարդյունքներ	<p>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p><i>(գիտելիք և իմացություն)</i></p> <ul style="list-style-type: none"> • ձևակերպել բետոնի և ամրանի ֆիզիկամեխանիկական հատկությունները և դրանց նորմատիվ և հաշվարկային դիմադրությունները, նորմատիվ և հաշվարկային բեռնվածքների որոշման կարգը, • ներկայացնել երկաթբետոնե կոնստրուկցիաների հաշվարկման մեթոդների փորձարարական հիմնավորումը, սահմանային վիճակների մեթոդով հաշվարկի առանձնահատկությունները: <p><i>(կարողություններ)</i></p> <ul style="list-style-type: none"> • որոշել կոնստրուկցիայում օգտագործվող բետոնի և ամրանի դասերը և դրանց հաշվարկային դիմադրությունները, • որոշել կոնստրուկցիայի հաշվարկային սխեման, նրա վրա ազդող հաշվարկային բեռնվածքները և դրանցից առաջացող ճիգերը, • կատարել ծովող, սեղմվող տարրերի հատվածքների ամրության հաշվարկ և կոնստրուկտավորում:
Դասընթացի թեմատիկ ծրագիր	<ul style="list-style-type: none"> • Բետոնի կառուցվածքը: • Բետոնի ամրությունը՝ ըստ առանցքային սեղմման: • Բետոնի ամրությունը՝ ըստ առանցքային ձգման: • Բետոնի ամրությունը՝ ըստ կտրման և սահքի: • Բետոնի ամրությունը բազմակի անգամ ազդող բեռնվածքների ազդեցության դեպքում: • Բետոնի ամրության փոփոխությունը ժամանակի ընթացքում: • Բետոնի դասերը և մակնիշները: • Բետոնի դեֆորմատիվությունը: • Ամրանի տեսակները և դասերը: • Ամրանի ֆիզիկամեխանիկական բնութագրերը:

	<ul style="list-style-type: none"> • Երկաթբետոնե կոնստրուկցիաների լարվածադեֆորմացիոն վիճակի երեք փուլերը: • Հաշվարկը՝ ըստ սահմանային վիճակների: • Հաշվարկի հիմնական դրույթները: • Ծովող տարրեր: Ծովող տարրերի կոնստրուկտավորման սկզբունքները: • Միակի ամրանով ուղղանկյուն կտրվածքով ծովող տարրերի երկայնական առանցքին նորմալ հատվածքի ամրության հաշվարկ: • Հարթ ծածկեր: Միաձույլ երկաթբետոնե հեծանային սալերով կողավոր ծածկեր: • Կրկնակի ամրանով ուղղանկյուն կտրվածքով ծովող տարրերի երկայնական առանցքին նորմալ հատվածքի ամրության հաշվարկ: • Ծովող տարրերի թեք հատվածքների ամրությունը: • Ծովող տարրերի թեք հատվածքների ամրության հաշվարկի սկզբունքները:
Դասընթացի գրականության ցանկ	<ul style="list-style-type: none"> • ՀՀ Շինարարական նորմերի ձեռնարկներ Հայաստանի հանքավայրերի բնական ծակոտկեն լցանյութերով թեթև բետոններից բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների նախագծում: Առաջին մաս, Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ առանց ամրանի նախապես լարման, Երևան, 2000թ., 200էջ: • Բաբայան Հ.Հ. Երկաթբետոնե կոնստրուկցիաներ, Երևան, Լույս հրատարակչություն, 1984թ., 358 էջ:

ՇԿ ամբիոնի վարիչ՝

Դադայան Տ. Լ.